

A 03.00.05  
4-45

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎՈՂԵՄԻԱ  
ԲՈՒՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՇՈՏԻ

ԾԱՌԱԲՈՒՅՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՎԱԿԱՅՐԵՐԻ  
ԿԱՆԱԿՎՊԱՏՄԱՆ ՄԵՋ

Գ.00.05 - Բուսաբանություն մասնագիտությամբ  
կենսաբանական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի ատենախոսության  
ՄԵՂՄԱԳԻՐ  
Երևան - 2001

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ БОТАНИКИ

ԱԳԱԺՋԱՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՇՈՏՈՎՆԱ  
ИСТОРИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ ДРЕВЕСНЫХ В ОЗЕЛЕНЕНИИ НАСЕЛЕННЫХ  
ПУНКТОВ АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ  
диссертации на соискание ученой степени  
кандидата биологических наук  
по специальности 03.00.05 - Ботаника  
Ереван - 2001

Ատենախոսության բեման հաստատվել է խԱրովյանի անվան Պետական Մանկավարժական Համալսարանում

Գիտական ղեկավար՝

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լ.Վ.Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Մ.Բարսեղյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու՝ Ա.Ա.Գրիգորյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2001թ. հուլիսի 3 – ին, ժամը 14<sup>00</sup> – ին

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում գործող 035 մասնագիտական խորհրդում

Հասցեն՝ 375063, Երևան - 63, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2001թ. հունիսի 1 - ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Կենսաբանական գիտությունների թեկնածու *Մ. Բարսեղյան* Գ.Խ.Բարսեղյան

Тема диссертации утверждена в Армянском Государственном Унивёрситете им. Х.Абовяна

Научный руководитель:

Доктор биологических наук, профессор Арутюнян Л.В.

Официальные оппоненты:

Доктор биологических наук, профессор Барсегян А.М.

Кандидат биологических наук Григорян А.А.

Ведущая организация – Армянская Сельскохозяйственная Академия

Защита состоится 3 июля 2001г. в 14<sup>00</sup> на заседании специализированного совета 035 Института ботаники НАН РА

Адрес: 375063, Ереван - 63, Институт ботаники НАН РА

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института

Автореферат разослан 1 июня 2001 г.

Ученый секретарь Специализированного Совета, кандидат биологических наук *Բարսեղյան* Барсегян А.Х.



1950-2001

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը. Էկոլոգիական և տնտեսական ճգնաժամերի պայմաններում, շատ արժեքավոր տեսակների անհետացումը կասկած չի հարուցում շրջակա միջավայրի լանդշաֆտային պահպանության խնդիրների արդիականությունն ու հրատապությունը: Լինելով կենսաբազմազանության պահպանման Կոնվենցիայի (1993թ.) լիիրավ անդամ, Հայաստանը մի շարք այլ պարտավորությունների հետ կարևորում է բնակավայրերի կանաչապատման ճիշտ կազմակերպման հարցերը:

Ներկայումս կանաչ շինարարության ճիշտ կազմակերպումը կապված է նոր խնդիրների հետ՝ Հայաստանի հրատապ բնապահպանական հարցերի լուծման ուղղությամբ: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում հին հայկական դեկորատիվ պարտիզազորության լավագույն ավանդույթների վերլուծումը և վերաիմաստավորումը: Ցավոք, խնդրի շուրջ եղած տեղեկությունները ցրված են տարբեր բնույթի գրականության մեջ և ուշադրության գրեթե չեն արժանացել:

Գրականության տվյալների և նյութական կուլտուրայի հուշարձանների վերլուծությունը, դեկորատիվ պարտիզազորության և արհեստական անտառապատման վերաբերյալ պատմական նյութի արժեքավորումը կենսաբանական առումով, հիմք կարող են հանդիսանալ արդի լանդշաֆտային ճարտարապետության ճիշտ կազմակերպման, շրջակա միջավայրի և ստեղծվելիք կանաչ մակերեսների միջև ընդհանուր ներդաշնակություն կազմելու գործում:

Հետազոտման նպատակն ու խնդիրները. Ատենախոսությունը, որը կատարվել է Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի կենսաբանության և կենսաբանության դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, նպատակ է հետապնդում վերծանել պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի բնակավայրերի կանաչապատման համակարգում օգտագործված ծառաթփատեսակակազմը: Այդ կապակցությամբ մեր առջև ծառացել են հետևյալ կոնկրետ խնդիրները.

1. Հավաքագրել և ամփոփել հավաստի պատմական աղբյուրների նյութերը Հայաստանի բնակավայրերի կանաչապատման զարգացման պատմական ուղու վերաբերյալ: Վերլուծել վերջին տասնամյակներում բացահայտված պալեոթնոբուսաբանական և հենաբանական փաստանյութը:
2. Կատարել Հայաստանի տարբեր շրջանների կանաչապատման նպատակով օգտագործված ծառաթփատեսակների մանրակրկիտ վերլուծություն՝ աբորիգեն, էնդեմ, ռելիկտ և էկզոտ տեսակների մասնակցության չափը պարզաբանելու համար:
3. Պատմական աղբյուրներում ուսումնասիրված ցեղերի անվանումները վերծանել բուսաբանական ժամանակակից անվանակոչությամբ ընդհուպ մինչև տեսակը:
4. Ստացված պատմական և ժամանակակից տվյալների համեմատական վերլուծությամբ տալ բնակավայրերի կանաչապատման առավել հեռանկարային ծառաթփատեսականին ղեկողլոգիական շրջանցմամբ:

5. Լուսաբանելով կանաչապատման համաշխարհային լավագույն ավանդույթների ազդեցությունը, շեշտել Հայաստանի բնակավայրերի կանաչապատման ինքնատիպությունը:

Գիտական նոտուք և կիրառական նշանակությունը. Առաջին անգամ փորձ է արվում ներկայացնել Հայաստանի բնակավայրերի կանաչապատման զարգացման պատմական ուղին՝ սկսած հնագույն ուրարտականից մինչև ժամանակակից(նոր և նորագույն) շրջանները:

Տարբեր բնույթի աղբյուրների, առանձին դրվագների և վկայությունների վերլուծությամբ ստացված նկարագրի հիման վրա, կազմվել են կանաչապատման գործընթացը արտացոլող աղյուսակներ: Աղյուսակներ կազմելիս եկել ենք կարևոր եզրահանգումների: Այսպես, նշված տեսակների բնական տարածման արեալը վկայակոչում է հին ժամանակներից բույսերի ինտրոդուկցիայի փաստը: Կանաչապատման գործընթացը Հայաստանում գտնվել է ֆունկցիոնալ կախման մեջ օտարերկրյա զավթիչների ներգործություններից, մերթ այն ծաղկում է ապրել, մերթ խամրել ժողովրդի սոցիալ – տնտեսական վիճակի վատթարացմանը զուգընթաց:

Համաշխարհային կանաչապատման պատմության լավագույն ավանդույթների վերլուծությամբ, փորձել ենք պարզաբանել նրա դրական ազդեցությունը Հայաստանի բնակավայրերի կանաչապատման գործընթացին: Անկասկած, հայկական դեկորատիվ պարտիզագործության արվեստի վրա ազդեցություն է գործել այն ժամանակվա հզոր պետությունների կանաչապատման արվեստը: Սակայն անժխտելի է, որ դարերի ընթացքում Հայաստանում ձևավորվել է միանգամայն ինքնատիպ պարտիզագործության հայկական արվեստը՝ իր հետևյալ առանձնահատկություններով.

ա. կանաչապատմանը՝ շինարարության բաղկացուցիչ մասն է.

բ. կանաչապատման ֆունկցիոնալ նշանակության կարևորությունը.

գ. շրջակա լանդշաֆտների, բնապատկերի առանձնահատկությունների ընդգրկումը կանաչապատման ընդհանուր կոմպոզիցիայում.

դ. կանաչապատման և ճարտարապետական ոճերի զուգակցումը.

ե. Գտնում ենք, որ կանաչապատման գործընթացը հայկական լեռնաշխարհում երբեք ինքնանպատակ չի եղել, այլ հիմնվել է բնական լանդշաֆտների բազմակողմանի ներդաշնակության սկզբունքի վրա:

Աշխատանքի ընթացքում ստացված տվյալների վերլուծությամբ մշակվել է բնակավայրերի կանաչապատման հեռանկարային ծառափառտեսագանկ:

Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ ծառափերի հեռանկարային տեսաշարը օգտակար կարող է լինել կանաչապատման ներկայիս տազնապալի վիճակը վերափոխելու, հեռանկարային գործընթացը կազմակերպելու գործում: Մեր տվյալները կարող են գիտական հիմք հանդիսանալ հանրապետության քաղաքների, բնակավայրերի, արդյունաբերական և այլ ձեռնարկությունների կանաչապատման նախագծերի ճիշտ կազմման, վերափոխման գործում:

Հետազոտության արդյունքները հուսալի նեցուկ կարող են ծառայել նաև մատաղ սերնդի էկոլոգիական դաստիարակման, դպրոցամերձ ուսումնա - փորձնական հողամասերի ստեղծման, հազվագյուտ և անհետացող տեսակների բազմացման, տարածման ու պահպանման գործում:

Աշխատանքի փորձաքննությունը (ապրոբացիան) Ատենախոսության հետ առնչվող աշխատանքները կատարվել են Խ.Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի կենսաբանության և կենսա-բանության դասավանդման մեթոդիկայի ամբիոնում (1996 – 2001թթ.): Ատենախոսության արդյունքները քննարկվել են ամբիոնի ընդլայնված նիստերում և Մանկավարժական Համալսարանի գիտական նստաշրջաններում, «Հայբուսակ» ինստիտուտի գիտական խորհրդի նիստերում, Մանկավարժական Համալսարանի 51 – րդ գիտ. ժողովում:

Հրատարակումները. Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի 5 տպագրված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և գործնական առաջարկներից: Այն շարադրված է համակարգչային 141 էջերում: Օգտագործված գրականության ցանկը ընդգրկում է 118 գրական աղբյուր, գետեղված են գունավոր լուսանկարներ, 7 տեղեկատվական աղյուսակներ:

#### Ատենախոսության բովանդակությունը

##### Գլուխ I. Կանաչապատման համառոտ պատմությունը

Տրվում է համառոտ ակնարկ կանաչապատման համաշխարհային զարգացման ընթացքի մասին: Պատմական Հայաստանը գտնվելով բազում միջազգային մայրուղիների խաչմերուկում, վաղ անցյալում լայն հնարավորություններ ուներ շփվելու հին աշխարհի հզոր տերությունների հետ: Վերջիններս ամեն կերպ ձգտում էին իրենց հզորությանը և հարստությանը վայել դեկորատիվ այգիներ հիմնել, որը խթան հանդիսացավ համաշխարհային դեմոկրոլոգիական գիտության սաղմնավորման ու հետագա զարգացման համար:

Կանաչապատման համաշխարհային պրակտիկայում մշակվել ու կենսագործվել են «դասական» բնույթ կրող մի շարք հեռանկարային ուղղություններ, որոնք ի վերջո տարբեր չափերով մտնու են գործել նաև Հայաստան: Դրանցից են՝

1. «Տոպիար» արվեստը՝ քանդակագործություն կենդանի բույսերի մասնակցությամբ (Հռոմ, Իտալիա);

2. «Բոնզայ» հնագույն ճապոնական արվեստին հոգեհարազատ գաճաճ ծառաթփատեսակների՝ մրտավարդ, մայրի նոճի, սոճիներ, ուռենիներ, քթենիներ... օգտագործումը;
3. Տանիքային այգեգործությունը (Իտալիա, ճապոնիա, Յուլանդիա);
4. «Բոսկետ» (Bosquet) զարմանահրաշ ու անկրկնելի կանաչապատում «Կանաչ քատրոն», «Լաբիրինթ», «Ջրի արահետ» (Լեոնտո);
5. «Էլլադա» տիպի հիասքանչ սիմետրիկ կամ «Ռեզուլյար» այգիների հիմնադրումը (Յունաստան);
6. Բնական, ոչ սիմետրիկ, պեյզաժային կամ համայնապատկերային լանդշաֆտային այգիների հիմնադրումը (Մեծ Բրիտանիա);
7. Մոնոկուլտուրային «Ռոզենգարդեն» բուրավետ վարդի այգիների հիմնադրումը (Ֆրանսիա, ք. Պրովեն, Անգլիա);
8. «Վերսալ» զբոսայգու հատուկ ոճը (XVII դար, Ֆրանսիա);
9. «Ամառային այգի» (XVII դար, Սանկտ – Պետերբուրգ, Ռուսաստան);
10. «Պետերհոֆյան պարկ» արքայական շատրվաններով, անտիկ շրջանի արձաններով, մարմարյա աստիճաններով (Պետրոս I, 1721, Սանկտ – Պետերբուրգ, Ռուսաստան);
11. «Ուտի» հորջորջվող չինական պարկային արվեստ՝ գաճաճ ծառաթփատեսակների, սարսփազդու սֆինքսերի, լուսի և ստվերի համադրությամբ (Չինաստան):

Հայաստանում ծառատնկումը և ծառապաշտությունը շատ հին պատմություն ունեն։ Անհիշելի ժամանակներից դեկորատիվ բույսերի ծաղիկները, պտուղները ու տերևները հանդիսացել են հայկական ճարտարապետական կառույցների ամենասիրված զարդանոտիվներից։

Ճիշտ է պարտիզագործության արվեստը հին Հայաստանում կազմավորվել է երկարատև դարերի ընթացքում, սակայն միշտ էլ հարզի է եղել։ Այգին դիտվել է, որպես արվեստի ստեղծագործություն, ուր ոճը, ձևը, տարբեր բույսերի ներդաշնակությունը համարվել է մարդու ստեղծագործ մղման արդյունք։

#### Գլուխ II. Աշխատանքի մեթոդիկան

Հայաստանի բնակավայրերի կանաչապատման պատմությանը վերաբերող նյութերը չափազանց սահմանափակ են ու կցկտուր։ Պրանցում հիմնականում գրավոր պատմաագագրական վկայություններ են արվում ինչպես հայ, այնպես էլ օտար պատմաբանների, բնափիլիսոփաների ու բժշկապետերի կողմից, ամենևին էլ ոչ դեկորատիվ պարտիզագործությունը նկատի ունենալով։ Այնուհանդերձ Հայաստանի կանաչապատման ու անտառապատման վերաբերյալ տեղեկատվություն հայթայթելիս մենք առաջնորդվել ենք հետևյալ աղբյուրներով։

1. Հայ մատենագրական հիմնարար աշխատություններ՝ Մ. Խորենացի, Թ. Արծրունի, Մ. Կաղանկատվացի, Եղիշե և ուրիշներ։ Մ. Խորենացին, իր «Հայոց պատմություն» 1500 տարի առաջ գրած աշխատանքում, ոչ միայն մանրամասն նկարագրում է պատմական Հայաստանի (շուրջ 500 հազար

քառակուսի կմ) առանձին բնակավայրերի կանաչապատման ու անտառապատման երևույթները, այլև իմաստավորել դրանք լանդշաֆտային ճարտարապետական տեսանկյունով։ Պարզվում է, որ կանաչապատումը անտիկ Հայաստանում եղել է քաղաքաշինության անխախտելի մասը։ Օրինակ, Երվանդաշատ քաղաքի շինարարության ու կանաչապատման փաստը, Կան քաղաքի ջրանցքի շինարարությունը, Ախթամար կղզում արաբական ոճի դարավանդային այգու հիմնադրումը և այլն։

2. Պատմագրական աշխատություններ։ Հայ պատմագիրներ՝ Լեոն, Մանանդյանի, Ա. Առաքելյանի, Բ. Առաքելյանի, Բ. Պիտրովսկու Հայաստանի կանաչապատման ու անտառապատման հարցերի մեկնաբանումները։
3. Հայկական ժողովրդական բանահյուսության ակունքները՝ էպոսներ, հեքիաթներ։
4. Գնագիտական ազգագրական պեղումների արդյունքները։ Շուրջ մեկ դար է Հայաստանի հանրապետության տարածքում Կարմիր բլուր, Արին բերդ, Քառնի, Գեղարդ, Լճաշեն, Դվին, Օշական... հույժանցվում են պեղումներ։ Նյութական կուլտուրայի բազմաթիվ հուշարձանների հետ բացահայտվել են փայտյա իրեր, որոնց մանրագծին անատոմիական ուսումնասիրությունները (Յացենկո – Խմելևսկի, Խուրշույան, Փայանջյան, 1984) ցույց են տվել, որ դրանք պատկանում են Հայաստանում աճող ծառատեսակներին՝ թեղի, բարդի կարմրածառ, ընկուզենի, բալենի և ուրիշներ։
5. Օտարներյա աղբյուրների նյութերը Հայաստանի մասին։ (Զսենոֆոն, Դիոդորոս, Ստրաբոն, Պլինիոս Ավագ, Տրալուստրոս, Շոպեն և ուրիշներ), որոնք չափազանց արժեքավոր տեղեկություններ են հիշատակում պատմական Հայաստանի բնակավայրերի կանաչապատման վերաբերյալ։ Օրինակ, Դիոդորոսից ենք տեղեկանում Հայաստանում կախիլի այգիների հիմնադրման փաստը։
6. ճարտարապետական բնութի աշխատությունները։ Հին Հայաստանի բնակավայրերը՝ եկեղեցիներով, վանքերով ու անկրկնելի խաչքարերով հանդերձ կուսական բնության անբաժանելի մասեր են։ ճարտարապետական մաս կազմող քանդակագործները, որոնցակարները բավականին հստակ պատկերացում են տալիս այն բույսերի մասին, որոնք օգտագործվել են կանաչապատման նպատակով։ Խաղողի որթի, նռան, ծիրանենու, թզենու, մշենու և այլ պտղատուների հետ միասին քանդակագործներում և որոնանկարներում հաճախ պատկերվում են նաև գեղազարդիչ բույսեր՝ նոճի, սոսի, մասրենի, բարդի և այլն։
7. Լեզվական տեղեկություններ. Հայոց լեզվի բառապաշարում առկա են այնպիսի բառեր, որոնք վկայում են, որ հին Հայաստանում բավականին բարձր մակարդակի վրա է եղել գեղազարդիչ պարտիզագործությունը։ Օրինակ, «պարտեզ», «բուրաստան», «եղենական այգի», «կախարդային այգի», «դրախտային այգի», «վարդանոց», «ճենարան» և այլն։ Այս

բառերի անառնական ստուգաբանությունը ցույց է տալիս, որ մեր հեռավոր նախնիները բավականին լավ ծանոթ են եղել շքեղաշուք այգիների կառուցման արվեստին և նրանց խորք չի եղել մոնոկուլտուրային տնկարկների արվեստը, որը գեղազարդիչ պարտիզագործության կարևոր մանրամասներին է:

8. Կանաչապատման նպատակով օգտագործված ծառաթփա- տեսակների անվանումների պարզաբանում. Մեթոդական առումով չափազանց դժվար է կանաչապատման բնագավառում հնում օգտագործված ծառաթփատեսակների կազմի բացահայտումը: Հատկապես հիշատակվում էր միայն ցեղը, իսկ տեսակները չէին համապատասխանում բուսաբանական մոր անվանակոչությանը: Դժվարություններ էր ստեղծվում էկզոտ, արորիզեն և էնդեն բուսատեսակները տարբերակելիս: Մենք առաջնորդվել ենք ժամանակակից բուսաբանական անվանակոչությամբ (Флора Армения, 1954 — 1998; Flora Turkey, 1965 — 1985; Flora Iranica, 1965 - 1983):
9. Հայաստանի բնակավայրերի կանաչապատման վերաբերյալ հավաքված նյութը ենթարկել ենք վերլուծության: Վերծանելով բուսաբանական ժամանակակից անվանակոչությամբ, կազմել ենք ըստ պատմական ժամանակաշրջանների ծառաթփատեսակներին արտացոլող աղյուսակ (աղ.Ն1) բնական տարածման արեալով, օգտագործման ծավալով, կանաչապատման կատեգորիաներով և տիպերով: Համեմատական վերլուծությամբ (աղ.Ն2) փորձել ենք պարզաբանել ըստ կոնկրետ ժամանակաշրջանների արորիզեն և ներմուծված տեսակների հարաբերությունը բնակավայրերի կանաչապատման գործընթացում: Մեր տվյալների հիման վրա հաշվարկել ենք տարբեր ժամանակաշրջաններում առավել տարածված, արդյունավետ տեսակները և կազմել հեռանկարային տեսակաչար (աղ.Ն3): Այն ընդգրկում է նախորդ ժամանակաշրջանում Հայաստանի բնակավայրերի կանաչապատման համակարգում օգտագործված առավել տարածված, բարձր գեղազարդ տեսակները, որոնցից մի մասը ներկայումս տարբեր պատճառներով դուրս է մնացել կանաչապատման համակարգից: Կատարել ենք հեռանկարային տեսակազմի դեմոլոգիական շրջանացում:

**Գլուխ III. Պատմական տեղեկություններ Հայաստանի բնակավայրերի կանաչապատման մասին.**

- 3.1 Հնագույն ժամանակներ. Հայաստանի համար դեկորատիվ պարտիզագործության պատմությունը սկսվում է դեռևս Ուրարտական շրջանից: Հայաստանի պատմության ուրարտական ժամանակաշրջանը բնորոշվում է մարդկության կուլտուրայի, այդ թվում և դեկորատիվ պարտիզագործության զարգացման աննախադեպ վերելքով: Բավական է նշել, որ Բաբելոնի զարմանահարաշ կախովի այգու կրկնօրինակը կառուցվել է հենց այս

ժամանակաշրջանում, երբ ներկայիս Վան քաղաքի տեղում փթթում ու զարգանում էր հռչակավոր Տուշպան (Ռեզել, 1898): Ըստ պատմական տեղեկությունների (Դիոդորոս, Խորենացի, Ռեզել, Պիտոլոսկի) ոչ միայն կառուցապատվեց ու կանաչապատվեց Հայաստանի առաջին մայրաքաղաք Տուշպան, այլև հսկայածավալ այգեստանները ոռոգելու նպատակով հզոր ջրանցք կառուցվեց՝ ջրանցքներով, ջրամբարով, ջրատար թունելներով և արվարձաններով:

Վերլուծական և գիտական վերամշակման արդյունքում հանգել ենք այն կարծիքի, որ անկախ քաղաքական իրավիճակներից և սոցիալ - տնտեսական պայմաններից, կառույցների և շրջակա բնության միջև ամբողջականության ապահովումը հին Հայաստանում ելակետային սկզբունք էր բնակավայրերի կանաչա-պատման գործընթացում: Դեռ ավելին, հնագույն ժամանակներից ուրարտացիներին հայտնի է եղել ծառաբույսերի միկրոկլի-մայակարգավորիչ դերը (Тихомировский, 1941):

Ուրարտական արծանագրություններում խոսվում է մի շարք պտղատու և դեկորատիվ բույսերի մասին, ինչպիսիք են խաղողը (Мелкитавани, 1960), սալորենին, նշենին, մայրին (Карапетян, 1943): Հնագիտական գտածոների շարքում հաճախ է հիշատակվում կյանքի ծառը, որը ըստ Բ. Բ. Պիտոլոսկու (1959) մնանցվում է փյունիկյան արմավենուն: Սակայն կյանքի ծառի հետ կապված այդ բնույթի պատկերները փոխ են առնված ասորացիներից (Сорокин, 1951), քանի որ հնագիտական և ագրոնոմիական տեղեկատվությունների համաձայն, պատմական Հայաստանի տարածքում հնարավոր չէր բաց գրունտի պայմաններում աճեցնել փյունիկյան արմավենի: Ուրարտական շրջանում կանաչապատման համար օգտագործվել են հիմնականում տեղական տեսակներ, իսկ իսկական էկզոտներ չեն օգտագործվել: Օտար բույսերը՝ օտար են եղել տվյալ ռեզիմի համար և ընդհանրապես Հայաստանի մեկ պատմական շրջանից տեղափոխվել են մեկ այլ պատմական շրջան: Ուստի ուրարտական ժամանակաշրջանում կանաչապատման համար օգտագործված բոլոր ծառատեսակները, բաժանում ենք 2 խմբի՝ արտաքին էկզոտներ՝ բերված օտար երկրներից և ներքին էկզոտներ՝ Ուրարտուի մի գավառից մյուս գավառ տեղափոխված տեսակներ:

- 3.2 Հին ժամանակաշրջան. Մ.թ.ա. III - I դարերում տեղական դարավոր ավանդույթների և հելլենիստական սկզբունքների համարդրությամբ Հայաստանը հասավ իր հզորության գագաթնակետին: Քաղաքները դարձել էին մշակութային ու տնտեսական խոշոր կենտրոններ: Հայ պատմիչների վկայությամբ (Փավստոս Բյուզանդ, Խորենացի, Արծրունի) Հայաստանի հին քաղաքները՝ Տիգրանակերտը, Արտաշատը, Երվանդակերտը, Արտամետը ճոխ կանաչի մեջ էին: Կանաչապատումը ինքնանպատակ չէր. կոմպոզիցիոն - դեկորատիվ էֆեկտը ներդաշնակություն էր ապահովում շինությունների և կանաչ տնկարկների միջև: Դրա վրա օրինակներից է Երվանդաշատ քաղաքի շինարարությունը (Խորենացի): Հավատարիմ կոմպոզիցիոն ամբողջականության սկզբունքին Երվանդաշատը եղել է շինությունների և այգիների մի համալիր, օրգանական

միասնություն կանաչ շինությունների և շրջակա բնակավայրերի միջև: Ծաղկանոցների, բուրաստանների և այգիների նկարագիրը զարմանք և հիացմունք են առաջացնում: Ժամանակակից լանդշաֆտային ճարտարապետության արվեստը խնդիր է դնում կանաչապատումը ներդաշնակել կառույցների հետ՝ այն, ինչին ձգտում էին մեր հեռավոր նախնիները դեռևս 2200 տարի առաջ:

Հին հայկական ձեռագրերում հիշատակվող և կանաչապատման արվեստում տարածում գտած դեկորատիվ ծառաթփատեսակները մեծամասամբ օտարերկրյա ծագման են: Այսպես, օրինակ, ամհիշելի ժամանակներից Արարատյան դաշտը չի կարելի պատկերացնել առանց շքեղ և բրգածև բարդիների, սպիտակ թթենու, սովորական ընկուզենու, զնդածև թեղու, որոնք էկզոտ բնույթի լինելով, օգտագործվել են զանգվածային կարգով: Այդ նույն ժամանակաշրջաններում, որոշ տեղեկությունների համաձայն (Քսենոֆոն, Լեզարո, Արամյանց), Հայաստանից ևս բույսեր են տարվել այլ երկրներ: Դա վերաբերվում է ոչ միայն ծիրանենուն, այլ և շագանակենուն: Հին հայկական «կասկեմի» (Ադամյանց, 1959) բառից է առաջացել հունական անվանումը Castanea, որը հիշատակվում է Քսենոֆոնը դեռ՝ 446 – 356 մ.թ.ա.:

Կարելի է մեծ համոզվածությամբ ասել, որ հնադարյան հայերը գիտակցում էին դեկորատիվ բուսատեսակների ստեղծած գեղարվեստական էֆեկտները: Դրա վառ օրինակներից է հայաստանաշունչ գարդաբանդակներով (Մուռ, խաղող) զարդարված Գառնիի հեթանոսական տաճարը: Ծաղիկների մեծ նպատակային կիրառման ապացույց է հին հայկական ձեռագրերի զարդարվեստը ծաղկապսակներով, ծաղկափնջերով, առանձին ծաղիկներով:

Անտիկ ժամանակաշրջանը Հայաստանում բնութագրվում է հելլենիստական քաղաքային մշակույթի զարգացմամբ: Տիգրան II, որին ակադեմիկոս Մանանդյանը բնութագրում է որպես հելլենիստական տիպի միապետ մեծ վարպետությամբ ու ճոխությամբ կառուցեց ու կանաչապատեց Տիգրանակերտը: Հավատարիմ անտիկ ճարտարապետության սկզբունքներին, հաշվի առնվեց շինությունների և բնության միասնությունը, որի անբաժանելի մասերն էին ջուրն ու կանաչը (Մանանդյան, 1977):

Պատմական տվյալները (Խորենացի, Առաքելյան, Հարությունյան) ցույց են տալիս հայերի հնուց եկող ձգտումը ամայի տարածքների լայնածավալ կանաչապատմանը, որպես տնկանյութ օգտագործելով տեղական և ներմուծված բուսատեսակները (Խոսրովի անտառ, Արտամետ, Վաղարշապատ քաղաքների կանաչապատումը): Այդ ազգանվեր գործին էր նպաստում և տոտեմ վերաբերմունքը առանձին ծառերի և ընդհանրապես անտառի նկատմամբ:

3.3 **Միջին դարեր:** Պատմական տեղեկություններ են հասել միջնադարյան Անի, Արծն, Կարին, Լոռե քաղաքների արվեստի, ճարտարապետության, առևտրական ճանապարհների մասին (Աբրահամյան, 1946, Առաքելյան, 1958, Մանանդյան, 1977): Չնայած նախորդ դարերում կանաչապատման և դեկորատիվ բույսերի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած մեծ համակրանքին և նույնիսկ ստեղծագործական մոտեցմանը, միջնադարում դիտվում է հակառակ պրոցեսը

անտարբերություն դեկորատիվ բույսերի նկատմամբ, տեղ տալով զուտ ուտիլիտար բույսերին: Մշակութային համար նախատեսված տարածքները խիստ կրճատվեցին և մոռացության մատնվեցին շատ դեկորատիվ բուսատեսակներ: Պատճառը միջնադարյան քաղաքների կառուցվածքն էր՝ խիստ կոմպակտ միջուկ բնակելի և հասարակական շենքերից, նեղ փողոցներ և, հետևաբար, տարածքային հնարավորությունների բացակայություն զբոսայգիների և պուրակների համար: Փաստորեն դադարում է կանաչապատման նպատակով դեկորատիվ բուսատեսակների տարածումը, փոխարինելով զուտ պտղատու տեսակներով: Օգտապաշտական բույսերի նկատմամբ պաշտամունքի հասնող վերաբերմունքի արտացոլումն ենք գտնում և միջնադարյան հայ ստեղծագործություններում (Գրիգոր Մագիստրոս, Վարդան Այգեկցի, Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ): Արժեքավոր են մեզ հետաքրքրող Եյուֆի վերաբերյալ միջնադարյան առակներից ստացած վերլուծական եզրահանգումները: Նրանցում պերճախոսորեն նկարագրված է պտղատու տեսակների պիտանելիությունը և անիմաստ է համարվում դեկորատիվ բույսերի տարածումը: Այս ժամանակաշրջաններում են հիշատակվում Հայաստան ներմուծված և տարածում ստացած բամբակենին, կիտրոնը, ճարիքը: Երկու ժամանակաշրջանին է վերաբերվում և պատմիչ Թովմա Արծրունու կողմից նկարագրված Ախթամարի կղզու վրա դարավանդային այգու ստեղծումը Գագիկ թագավորի կողմից: Դարավանդային այգիները մեծ տարածում ունենալով արաբական աշխարհում, ներթափանցեցին և միջնադարյան Հայաստան:

Ուշ միջնադարի բնակավայրերի կանաչապատման և անտառապատման վերաբերյալ որոշ տեղեկություններ ենք քաղում Մխիթար Հերացու, Ամիրդովլաթի, Գրիգոր Այնեբցու, Թովմա Կիլիկեցու աշխատություններից:

Հայաստան ներմուծված և տեղական բնորոշ բույսերի գրեթե լիակատար ցանկ ենք տեսնում Ա.Շահրիմանյանի մոտ (1818): Հեղինակը բնորոշում է տեղական ձևերը, տալիս պարզաբանումներ ներմուծված տեսակների վերաբերյալ: Այսպես, նշելով, որ ամհիշելի ժամանակներից Հայաստանում մշակվող թթենին, ծիրանենին, դեղծենին՝ էկզոտ բնույթի են, հեղինակը ուղղում է մտցմուն Հայաստանի տարածքում նրանց հնարավոր պարելավայրի մասին:

Վերլուծական աշխատանքը մեզ հանգեցնում է այն կարծիքի, որ ուշ միջնադարում կանաչապատման նպատակով ներմուծված ծառաթփատեսակների մեծ մասը սերտացել է հայ ժողովրդի կենցաղում (արխիոֆիտներ):

3.4 **Նոր և նորագույն ժամանակաշրջան.** Բնակելի շրջանների կանաչապատման պրոբլեմը մշտապես արդիական է բնակլիմայական, ճարտարապետական, դեկորատիվ արժեքավորությամբ: Նոր ժամանակաշրջանի կանաչապատման գործընթացը պարզաբանելիս հիմք ենք ընդունել արդի ժամանակաշրջանի բուսաբան - գիտնականների աշխատությունները (Թախթաշյան, Յարոշենկո, Մախատաձե, Ղազարյան, Հարությունյան, Խուրշուդյան), փորձելով որոշ հետևություններ կատարել: Աննախադեպ վերելք է ապրում բնակավայրերի կանաչապատման և





Հայաստանի բնակավայրերի կանաչապատման համար առավել հեռանկարային ծառաբույսեր՝ ըստ դեմոկրոտիկական օկրուզների և օգտագործման ասպարեզների

Աղյուսակ 3

| 1                                  | 2   | 3                                    |
|------------------------------------|---|--------------------------------------|
| Ծառաբույսեր անվանումը              | Դեմոկրոտիկական օկրուզներ                                    | Կանաչապատման կատեգորիան կամ տիպը     |
| Armeniaca vulgaris Lam.            | VII (20), VIII, X, IV, IX (28), IX(30)VII(19)               | գ., խ., ծ., ս., փ., տ., ա.հ.         |
| Ailanthus altissima (Mill) Jwingle | VII (20), VIII, X, IV, IX (28), IX(30)VII(19)               | գ., խ.ս., ծ.                         |
| Acer pseudoplatanus L.             | IV, III, I, II, V, IX, VI, VII, X                           | գ., խ., ս., փ.տ.                     |
| Acer campestre L.                  | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ.           |
| Acer platanoides L.                | բոլոր   | գ., խ., ծ.                           |
| Acer negundo L.                    | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ.                 |
| Betula Litwinowii A.Doluch         | I, II, III, IV, V, VI, VII, IX, X                           | գ., խ., ծ., ս., փ.տ.                 |
| Betula verrucosa Ehrh.             | բոլոր բացի VIII   | գ., խ., ծ., ս., փ.տ.                 |
| Biota orientalis Endl.             | I(3), IV, VI, VII, VIII, X, IX (28), IX(30)                 | խ., ծ., կ.գ., փ.տ., ա.հ.             |
| Buxus sempervirens L.              | III, IV, VI, VII, VIII, IX, X                               | խ., ծ., ս., կ.գ., փ.տ., ռ.           |
| Cydonia oblonga Mill               | III, IV, VI, VII, VIII, IX, X                               | խ., ծ., ս.                           |
| Cerasus vulgaris Mill              | բոլոր   | խ., ծ., ս., փ.տ., ա.հ.               |
| Carpinus caucasica A. Grossh       | IV, VII, X  | գ., խ., ս., ծ., կ.գ., փ.տ.           |
| Caragana arborescens Lam.          | բոլոր   | խ., ծ., ս., փ.տ.                     |
| Catalpa ovata G.Don.               | IV, VIII, IX(28), VII, X                                    | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ.           |
| Cupressus sempervirens L.          | IV, IX(ա), X  | գ., խ., ծ., փ.տ., ա.հ.               |
| Corylus avellana L.                | IV, VII, VIII, IX(28), X                                    | խ., ծ., կ.ծ., փ.տ., ա.հ.             |
| Cotinus coggygria Scop.            | IV, VIII, IX(28), VII, X                                    | խ., ծ., ռ.կ., ա.հ.                   |
| Diospyros lotus L.                 | IV, VIII, IX(28), VII, X                                    | գ., խ., ծ.ս., փ.տ.                   |
| Euonymus europea L.                | IV, III, V, VIII, IX, VII, X                                | խ., ծ., կ.գ., ա.հ.                   |
| Elaeagnus angustifolia L.          | III, VII, IV, VIII, IX(28), X                               | խ., ծ., փ.տ., ա.հ.                   |
| Fagus orientalis Lipsky            | IV, IV(10), VII   | գ., խ., ծ., ս.                       |
| Forsythia intermedia Zab.          | IV, VIII, IX(28), VII, X                                    | խ., ս., ծ., փ.տ., ռ.                 |
| Fraxinus americana L.              | բոլոր   | գ., խ., ծ., փ.տ., ա.հ.               |
| Fraxinus excelsior L.              | բոլոր   | խ., ծ., ս., փ.տ., ռ.                 |
| Gleditsia triacanthos L.           | I(3), III(7,8), IV, VIII, IX, VII, IX                       | գ., խ., ծ., կ.գ., փ.տ., ա.հ.         |
| Hippophae rhamnoides L.            | բոլոր   | խ., ծ., ս., ա.հ., փ.տ.               |
| Hibiscus syriacus L.               | IV, VIII, IX(28), VII, X                                    | խ., ծ., ս., կ.գ., փ.տ.               |
| Juniperus virginiana L.            | IV, VIII, IX(28), VII, X, IX                                | գ., խ., ծ., ս., կ.գ., փ.տ., ա.հ., ռ. |
| Juniperus oblonga M.B.             | I(3), II(4), III, VII, VIII, V, IX, VI                      | գ., խ., ս., ծ., կ.գ., փ.տ., ա.հ., ռ. |
| Juniperus sabina L.                | բոլոր   | խ., ս., ծ., փ.տ., ա.հ., ա., ռ.       |
| Juglans regia L.                   | IV, VIII, IX(28), VII, X                                    | գ., խ., ծ., ս., փ.տ.                 |
| Ligustrum vulgare L.               | բոլոր   | խ., ծ., կ.գ., փ.տ., ա.հ.             |
| Malus domestica Borkh.             | բոլոր   | խ., ծ., ս., փ.տ.                     |
| Morus alba L.                      | IV, VIII, IX(28), VII, X                                    | խ., ծ., կ.գ., փ.տ., ա.հ.             |
| Punica granatum L.                 | IV(9), IX(28), VII(20), X                                   | խ., ծ., ս., փ.տ., ա.հ.               |
| Pyrus communis L.                  | բոլոր   | խ., ծ., ս.                           |
| Picea pungens v. glauca Belssh.    | բոլոր   | գ., խ., ս., ծ., փ.տ., ա.հ., ռ.       |
| Persica vulgaris Mill              | IV(9), IV(10), VIII, IX(28), VII(19,20), X                  | խ., ս., ծ.                           |
| Platanus orientalis L.             | IV, VIII, IX(28), VII, X                                    | գ.                                   |
| Platanus acerifolia Willd.         | IV, VIII, IX(28), VII, X                                    | գ., խ., ս., ծ., փ.տ.                 |
| Prunus domestica L.                | բոլոր   | խ., ծ., փ.տ., ա.հ.                   |
| Pinus silvestris L.                | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ.                 |
| Populus deltoides Marsh.           | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ.           |
| Populus alba L.                    | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ.                 |
| Populus simonii Carr.              | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ.           |
| Populus pyramidalis Rozier         | IV, III, I(3), I(2), VIII, IX, VII, X                       | խ., ս., ծ., փ.տ., ա.հ.               |
| Populus nigra L.                   | բոլոր   | գ., խ., ծ., փ.տ., ա.հ.               |
| Populus tremula L.                 | բոլոր   | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ.           |
| Quercus iberica Jtev. In Bleb.     | IV, III, I(3), II(5), VII, X, V(12), V(14), VI(7), VIII, IX | գ., խ., ս., ծ.                       |
| Quercus robur L.                   | IV, III, I(3), II(5), VII, X, V(12), V(14), VI(7), VIII, IX | գ., խ., ս., ծ., փ.տ.                 |
| Rosa damaszena                     | IV, III, I(3), II(5), VII, X, V(12), V(14), VI(7), VIII, IX | խ., ս., ծ.                           |

| 1                                    | 2   | 3                          |
|--------------------------------------|---|----------------------------|
| Rosa millifolia                      | IV, III, I(3), II(5), VII, X, V(12), V(14), VI(7), VIII, IX |                            |
| Robina pseudoacacia L.               | IV, III(7), II(5), I(3), VIII, V(12), VII, X, IX            | գ., ծ., փ.տ., ա.հ.         |
| Ribes nigrum L.                      | բացի VIII և X - ից  | խ., ս., ծ., ա.հ.           |
| Sambucus nigra L.                    | IV, III, I(3), II(5), VII, X, V(12), V(14), VI(7), VIII, IX | խ., ծ., փ.տ., ա.հ.         |
| Salix alba L.                        | բոլոր   | խ., ս., ծ., փ.տ.           |
| Salix alba V. pendula vitallina nova | բոլոր   | խ., ս., ծ., փ.տ.           |
| Sorbus aucuparia L.                  | բոլոր   | գ., խ., ս., ծ., փ.տ.       |
| Syringa vulgaris L.                  | բոլոր   | գ., խ., ծ., փ.տ.           |
| Sophora japonica L.                  | VIII, IX(28), VII, X  | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ. |
| Spiraea vanhouttei (Briot) Zbl.      | բոլոր   | խ., ծ., կ.գ., փ.տ.         |
| Tamanax araratica (Bunge) Gorschk.   | VIII, IX(28), V(12), VII, X                                 | խ., ս., ծ., կ.գ., ա.հ.     |
| Tilia caucasica Rupr.                | IV, VII(3), I(3), II(4), IX, VIII, V(14), VI(17), VII       | գ., խ., ծ., ս., փ.տ., ա.հ. |
| Ulmus laevis Pall.                   | բոլոր   | գ., խ., ծ., փ.տ., ա.հ.     |
| Ulmus densa Letw.                    | VIII, V(12), IX(28), VII, X                                 | խ., ծ., ս., փ.տ.           |
| Vitis vinifera L.                    | IV(9), VIII, IX(28), VII, X                                 | ռ.կ.                       |
| Viburnum opulus L.                   | բոլոր   | խ., ծ., կ.գ.               |

- I - Շիրակ - Աշոցի օկրուզ;
- II - Ապարան - Չրազդանի օկրուզ;
- III - Լոռու օկրուզ;
- IV - Իջևանի օկրուզ;
- V - Սևանի օկրուզ;
- VI - Սիսիանի օկրուզ;
- VII - Չանգեզուրի օկրուզ;
- VIII - Երևանի օկրուզ;
- IX - Արփիու օկրուզ;
- X - Մեղրու օկրուզ;
- I(3) - տափաստանային;
- I(2) - լեռնատափաստանային;
- II(4) - մարզագետնատափաստանային;
- II(5) - անտառային;
- III(7) - անտառատափաստանային;
- III(8) - լեռնատափաստանային;
- IV(10) - անտառային;

- IV (9) - մերձարևադարձային;
- V(12) - նոսրանտառային;
- V(13) - տափաստանային;
- V - Սևանի օկրուզ;
- VI - Սիսիանի օկրուզ;
- VII - Չանգեզուրի օկրուզ;
- VIII - Երևանի օկրուզ;
- IX - Արփիու օկրուզ;
- X - Մեղրու օկրուզ;
- I(3) - տափաստանային;
- I(2) - լեռնատափաստանային;
- II(4) - մարզագետնատափաստանային;
- II(5) - անտառային;
- III(7) - անտառատափաստանային;
- III(8) - լեռնատափաստանային;
- IV(10) - անտառային;

- գ. - գանգվածներ;
- խ. - խմբեր;
- ս. - տվյալներ;
- ծ. - ծառուկներ;
- կ.գ. - կենդանի ցանկապատ;
- ռ.կ. - ուղղաձիգ կանաչապատում;
- փ.տ. - փողոցային տնկարկներ;
- ռ. - ռոկարիաներ;
- ա.հ. - արդյունաբերական իրավաբանական

Եզրակացություններ

1. Հայաստանը լինելով աշխարհի հնագույն և զարգացած մշակույթ ունեցող երկիր, բարձր մակարդակ է ունեցել նաև արհեստական անտառաշինության և դեկորատիվ պարտիզազորության բնագավառում: Օգտագործելով ոչ միայն պատմական Հայաստանի արորիզեն բուսատեսակները, այլև օտար երկրներից ևս ներմուծված բարձր դեկորատիվությամբ օժտված բույսեր, ստեղծվել է յուրահատուկ դեկորատիվ պարտիզազորության ոճ, որը միանգամայն համապատասխանում է հայկական բնաշխարհի առանձնահատկություններին և հայկական ճարտարապետական ոճին:
2. Կանաչապատումը Հայաստանում ինքնանպատակ չի եղել և այն հաստատվում է երկու տիպի պատմական փաստերով.
- ա. կանաչապատման պրոցեսում հաշվի են առնվել շրջակա միջավայրի լանդշաֆտային առանձնահատկությունները (ռելիեֆ, բնապատկերի, ջրային մանրամասներ, առկա բուսականություն և այլն) և դրան համապատասխանում էր կանաչապատման ճարտարապետական ոճը, այնպես որ շրջակա միջավայրը մի ընդհանուր ներդաշնակություն կազմելով լրացնում էին մեկը մյուսին:
- բ. կանաչապատումը ունեցել է միկրոկլիմայակարգավորիչ նշանակություն՝ կանաչ տնկարկների միջոցով բարելավվել է շրջակա լանդշաֆտների միկրոկլիմայական պայմանները:
3. Հայաստանի չոր ցամաքային կլիմայական պայմաններում, պատմական որոշ մարզերում հնարավոր չէր առանց ռոզոման աճեցնել հատկապես օտարածին (ներմուծված) դեկորատիվ տեսակներ: Այդ ժամանակներում կառուցված ջրանցքները աչքի էին ընկնում հիդրոտեխնիկական բարդ հանգույցներով (ջրի օրական և սեզոնային հոսքը կարգավորող ջրամբարներ, աքվեդուկներ, թունելներ և այլն), որոնցից շատերը այսօր էլ գործում են:
4. Պատմական Հայաստանի բնակլիմայական բազմազանության պայմաններում առանձնացվել է 2 տիպի էկզոտների առկայություն՝ արտաքին (խսկական)՝ բերված այլ երկրներից և ներքին (ոչ իսկական)՝ մի շրջանից մյուս շրջան տեղափոխված տեսակներ:
5. Հայրենի բնաշխարհի եղած բնական կանաչ տնկարկների պահպանության և նոր զանգվածային կանաչ տնկարկների ստեղծման գործում մեծ նշանակություն է ունեցել բույսերի տոտեմիզմը:
6. Հայաստանում դեկորատիվ պարտիզազորության զարգացման գործում ազդեցություն է գործել այն ժամանակվա հզոր պետությունների կանաչապատման արվեստը: Դարերի ընթացքում Հայաստանում ձևավորվել է միանգամայն ինքնատիպ դեկորատիվ պարտիզազորության հայկական արվեստ, որի հիմնական առանձնահատկություններն են՝
- ա. շրջակա լանդշաֆտների, բնապատկերի առանձնահատկությունների հաշվի առնելը և դրանց կարևոր մանրամասները կանաչապատման ընդհանուր կոմպոզիցիայի մեջ ընդգրկելը.
- բ. կանաչապատումը շինարարության բաղկացուցիչ մասը համարելը.

- գ. կանաչապատման ոճը՝ ճարտարապետական շինարարական ոճին համապատասխանեցնելը.
- դ. կանաչապատման ֆունկցիոնալ նշանակության կարևորությունը:
7. Հին ժամանակներից հայերը զբաղվել են բույսերի ինտրոդուկցիայով և շատ տեսակներ վերածվելով արխիտֆիտների, մեր բնաշխարհում գտել են իրենց երկրորդ հայրենիքը և մշակվում են մինչև օրս:
8. Կանաչապատման գործընթացը կապված է եղել սոցիալ – տնտեսական քաղաքական իրավիճակների հետ: Աբորիզեն և ներմուծված տեսակների օգտագործման հարաբերակցությունը, որպես կանոն, համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի կանաչապատման բնույթին: Այսպես, ներմուծված տեսակների տեսակարար կշիռը անտիկ շրջանում գերազանցում է արորիզեն տեսակներին՝ (14 : 6) տարանցիկ և առևտրական կապերի ընդլայնման հետևանքով, ի տարբերություն ուրարտական շրջանի (11 : 13): Վաղ միջնադարում՝ ելնելով քաղաքների կառուցվածքային առանձնահատկություններից, կտրուկ փոխվում է վերաբերմունքը դեկորատիվ տեսակների նկատմամբ և առաջնություն է տրվում արորիզեն օգտապաշտական բնույթի տեսակներին (մոտ 70 %) : Ոչ մեծ քանակի ինտրոդուկցված տեսակներ էլ (35%) նույնպես ուտիլիտար բնույթի էին: Հաջորդ պատմական ժամանակաշրջաններում (ուշ միջնադար, ժամանակակից շրջան)՝ առևտրական, միջազգային գիտական կապերի ընդլայնմամբ ներմուծված տեսակները (70%) զգալի գերազանցում են արորիզեն տեսակաճան:
9. Որպես կանոն, բոլոր պատմական ժամանակաշրջաններում կանաչապատման մեջ օգտագործված տեսակաշարում գերակշռում է տերևաթափ տեսակների տեսակարար կշիռը (50 – 82 %) : Դրան հակառակ մշտադալար տեսակները սովորաբար կազմում են 6 – 16 % : Այս հանգամանքը պետք է հաշվի առնել կանաչապատման հեռանկարային տեսակաշար կազմելիս, քանի որ տնտեսական և էկոլոգիական ճգնաժամերի հետևանքով (հատկապես XX դարի 90 - ական թվ.) զգալի վնաս են կրել բնական անտառներն ու դեկորատիվ տնկարկները, ոչնչացել կամ վտանգված են մինչ այդ կանաչապատման համակարգում օգտագործվող շատ ծառատեսակներ:
10. Տարբեր պատմական ժամանակաշրջանների համեմատական վերլուծության հիման վրա կազմվել է բնակավայրերի կանաչապատման հեռանկարային տեսակաշար, ուր տեղ են գտել նաև անցած ժամանակաշրջաններում կանաչապատման մեջ լայն տարածում գտած, բարձր գեղագրող տեսակները, որոնք տարբեր պատճառներով դուրս են մնացել կանաչապատման համակարգից: Այն կարող է օգտագործվել կանաչապատման հիմնավորված նախագծերը կազմելու, վերակառուցելու և ընդլայնելու գործում:

Ատենախոսության քեմայով տպագրված աշխատանքների գուցակ

1. Աղաջանյան Մ. Ա. Բույսերի տոտեմիզմը Հայաստանում. Հայաստանի կենսաբան. հանդես Հ. II, N3, 1999, էջ 251 – 252.

2. Աղաջանյան Մ. Ա. Կանաչապատման և անտառապատման ֆունկցիոնալ բնույթը պատմական Հայաստանում // Հայաստանի կենսաբան. հանդես, ԳԼII, N3, 1999, էջ 253 – 254.
3. Աղաջանյան Մ. Ա., Հարությունյան Լ.Վ. Հայաստանի եղեմական այգիները // Երևանի «Հայրուսակ» ինստիտուտի գիտ. աշխ. ժողովածու, N3, 2000.
4. Աղաջանյան Մ. Ա. Համառոտ ակնարկ Հայաստանում ղեղարկյալների օգտագործման մասին // Երևանի «Հայրուսակ» ինստիտուտի գիտ. աշխ. ժողովածու, N3, 2000.
5. Աղաջանյան Մ. Ա. Բնակավայրերի կանաչապատման արդիական խնդիրները // Խ. Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի 51 - ռդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Երևան, 2001, էջ 114 –115:

Ագաձայնյան Մարգարիտա Աշոտովնա  
 История использования древесных в озеленении населенных пунктов  
 Армении

Диссертация на соискание ученой степени кандидата биологических наук  
 по специальности 03.00.05 - Ботаника

Защита состоится 3 июля 2001 г. по адресу Ереван, Институт Ботаники  
 НАН РА на заседании специализированного совета 035 Института Ботаники  
 НАН РА

#### Резюме

Уровень культурного развития народа определяется наряду с другими показателями и традициями декоративного озеленения и искусственного лесоразведения.

Армения с древних времен славилась своими знаменитыми садами и великолепными парками.

В силу известных причин (время, войны, бедствия), имеющиеся о них данные недостаточны, разбросаны в разного рода источниках, утеряны.

Аналитический подход к литературным источникам, относительно декоративного озеленения и искусственного лесоразведения и памятникам материальной культуры, могут стать основой правильной организации современного ландшафтного строительства, создания единства между окружающей средой и зелеными насаждениями. Помимо научного анализа исторических свидетельств (Моисей Хоренский, Товма Арцруни, Египсе,

Мовсес Каланкатуйский, Лео, Пиотровский и др.), в процессе разработки интересующего материала большую роль сыграли исследования народной словесности, материалы иностранных источников (Страбон, Диодор, Плутарх, Геродот и др.), результаты археологических раскопок, аналитические изыскания архитектурного характера, грамматическая этимология.

Озеленение населенных пунктов, ставя в основу защиту окружающей среды, учитывает традиционный стиль, своеобразное восприятие народа к зеленым насаждениям.

В деле озеленения населенных пунктов и сохранения видового разнообразия большую роль сыграло тотемное отношение армянского народа не только к отдельным деревьям, но и к лесу вообще ("лес священный").

Работа была направлена на уточнение видового состава древесных, используемых в озеленении населенных пунктов Армении в разные исторические периоды. Мотивировка в данном направлении затруднена, т.к. древесные данного дендрологического района считаются экзотами для другого дендрологического района.

Краткий обзор всемирной истории озеленения позволил выявить влияние других культур в конкретных исторических и социально - экономических условиях. Несомненно, это влияние очевидно. Однако в ходе исследований приходим к выводу, что на протяжении веков в Армении сформировалось самобытное искусство декоративного озеленения и искусственного лесоразведения с присущими ему особенностями:

- а. учет и вовлечение в общую композицию озеленения окружающей среды, ландшафтов с их деталями;
- б. озеленение - составная часть строительства;
- в. соответствие стилей озеленения и архитектуры;
- г. первостепенность функционального значения озеленения, что предполагает улучшение микроклиматических условий окружающей среды.

На основе анализа древесных, используемых в системе озеленения, соответственно конкретным историческим эпохам даны таблицы по видовому составу, сравнительная таблица и, исходя из этого перспективная таблица. Предложенная перспективная таблица включает наиболее распространенные в разные исторические периоды виды, результативно используемые в системе озеленения.

Видовой состав приведенных таблиц свидетельствует, что многие экзоты, став архефитами, создали свой своеобразный стиль, самозвучный с особенностями климата и архитектурного стиля.

05.02.2013

В результате энергетического кризиса начала 90 – ых годов вместе с естественными лесами значительно пострадали и многие декоративные насаждения с ценными экзотическими видами, под угрозу поставлено существование многих видов.

Актуальность темы диктуется условиями экологического и экономического кризисов, в которых оказалась Армения на пороге нового тысячелетия.

Предложенная перспективная таблица могла бы быть полезна для восстановления и распространения используемого до недавнего времени видового разнообразия древесных, правильной организации озеленения и природоохранных мероприятий.

*M. A. A.*



1913. 10. 29

Հարգելի անձնակազմի անդամներին և զինվորներին  
մեր անհատական և անհատական անհատական անհատական  
անհատական անհատական անհատական անհատական  
անհատական անհատական անհատական անհատական

Հարգելի անձնակազմի անդամներին և զինվորներին  
մեր անհատական և անհատական անհատական անհատական  
անհատական անհատական անհատական անհատական

Հարգելի անձնակազմի անդամներին և զինվորներին  
մեր անհատական և անհատական անհատական անհատական  
անհատական անհատական անհատական անհատական